

ԴՐԱՄԱԿԱՆ ՀՈՍՔԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ

Նարինե ՍԱՐԳՍՅԱՆ

ՀՊՏՀ Կառավարչական հաշվառման և աուդիտի ամբիոնի հայցորդ

Բանալի բառեր. ֆինանսական գործակիցներ, դրամական հոսքերի ցուցանիշներ, դրամական հոսքերի ներդաշնակեցում, դրամական հոսքերի արդյունավետ կառավարում

Վերլուծությունը կազմակերպությունների տնտեսական գործունեության առանձին արդյունքները վերածում է չափելի և գնահատելի ցուցանիշների, որոնք օգտագործվում են տնտեսավարման արդյունավետության ռեզերվների բացահայտման, մրցունակ գործարարության, ռիսկերի կանխարգելման վերլուծական մեկնաբանություններում: Վերլուծությունը տրոհելով կազմակերպությունների տնտեսավարման ամբողջական համակարգն առանձին մասերի՝ ոչ միայն ռետրոսպեկտիվ, այլև ռազմավարական գնահատականներ է տալիս տնտեսական գործունեության յուրաքանչյուր ոլորտի կամ գործառույթի բարելավման գծով, որից անմասն չեն մնում նաև կազմակերպություններում ձևավորվող դրամական հոսքերը:¹

Որպես կանոն, տնտեսական վերլուծության մեթոդաբանությունը կառուցվում է երկու ուղղությամբ՝ գործոնային և իրավիճակային: Գործոնային վերլուծություն իրականացնելու նպատակը ուսումնասիրվող ցուցանիշների փոփոխությունների վրա տարբեր գործոնների ազդեցության չափի ու բնույթի բացահայտումներն են, որոնցով կառավարչական որոշումներ են կայացվում տնտեսավարման գործընթացում տեղ գտած բացասական երևույթների կանխարգելման ուղղությամբ:

Իրավիճակային վերլուծության նպատակը կիրառվող ֆինանսական գործակիցների օգնությամբ կազմակերպությունների տնտեսավարման գործընթացի դրական և բացասական կողմերի ախտորոշումն է, որը նույնպես հիմք է հանդիսանում մրցունակության բարձրացման, ֆինանսական կայունության ամրապնդման, ինչպես նաև գործարարության առողջացման գծով կառավարչական որոշումներ ընդունելիս: Կազմակերպությունների դրամական հոսքերն ուսումնասիրելիս գործնականում առավել կիրառական են իրավիճակային վերլուծության մոտեցումները, երբ հաշվարկվում են դրամի շարժը, ուղղությունները, համարժեքությունը, հոսքերի ներդաշնակեցումը բնութա-

¹ Ковалев, В.В. Анализ хозяйственной деятельности предприятия: учебник / В.В. Ковалев, О.Н. Волкова. – М.: ТК Велби, 2002, С. 12.

գրող ֆինանսական գործակիցներ:² Սակայն դրա հետ մեկտեղ, տեսության մեջ հեղինակների կողմից դրամական հոսքերի գործակցային վերլուծության նպատակահարմարությունը միանշանակ չի ընդունվում՝ կապված տեղեկատվական ապահովվածության և կառավարչական որոշումների բնագավառում իրավիճակային վերլուծության առավելությունների և թերությունների հետ:³ Գործակցային վերլուծության առավել հիմնական առավելություններից են կիրառման պարզությունը և վերլուծական ընդգրկուն համեմատությունները: Վերլուծության ընթացքում ստանդարտ ֆինանսական գործակիցները համեմատաբար հեշտ հաշվարկելի են և կիրառելի՝ համեմատություններ կատարելու ոչ միայն սահմանված նորմատիվային մեծությունների, այլև մրցակից կազմակերպությունների ֆինանսական գործակիցների հետ և դրանով իսկ, բնութագրելու վերլուծվող կազմակերպության ֆինանսական կայունության սպառնալիքները և մրցակցային դիրքերը (տե՛ս, Աղյուսակ 1):

Չնայած նշված առավելություններին՝ մասնագիտական գրականությունում կարծիք է հայտնվում այն մասին, որ ստանդարտ ֆինանսական գործակիցներն ու դրանց նորմատիվային մեծությունները, որպես վերլուծության գործիքներ, ունեն որոշակի թերություններ: Առևտրային կազմակերպությունների մրցակցային դիրքերի վերաբաշխումն ստիպում է պարբերաբար վերանայել սահմանված նորմատիվները, որի հետևանքով մի քանի տարվա կտրվածքով հաշվարկված գործակիցները անհամադրելի են դառնում անփոփոխ մնացած միևնույն նորմատիվային մեծության հետ⁴: Այս առումով, ֆինանսական գործակիցների համակազմն առաջարկվում է ներկայացնել ոչ թե տարանջատված, այլ՝ փոխկապակցված և համակարգված բիզնես ռիսկերի, ֆինանսական դրության կայունության սահմանափակ ռեսուրսների, դրամական հոսքերի թուլատրելի շրջանակների հետ: Նման համակարգումը հնարավորություն է տալիս ոչ միայն ձևավորելու պարտավորությունների շրջանակը՝ ի նպաստ ֆինանսական կայունության ապահովմանը, այլև հաշվի առնել գործարարության ակտիվության շահերը: Մասնագիտական գրականությունում տեսակետ է կա կազմակերպությունների դրամական հոսքերը բնութագրող ցուցանիշները վերլուծելու երեք կտրվածքով (տե՛ս Գծապատկեր 1).

- բացարձակ ցուցանիշներով,
- հարաբերական ցուցանիշներով՝ դրամական միջոցների մնացորդների մասնակցությամբ,

² Уколова, С.А. Управление денежными потоками на основе концепции «кэш-пулинг», Актуальные проблемы бухучета, анализа, аудита, налогообложения и статистики: м-лы всерос. науч.-практ. конф. (18 апр. 2013 г.) Рост. гос. Экон. ун-т (РИНХ). Ростов н/Д, 2013.


³ Сорокина Е., Анализ денежных потоков предприятия: теория и практика в условиях реформирования российской экономики, М.: Финансы и статистика, 2002. С. 44-45.

⁴ Գուղորյան Ա., Հաշվապահական հաշվառում, «Տնտեսագետ», Եր., 2007, թ., էջ 862

• հարաբերական ցուցանիշներով՝ դրամական միջոցների հոսքերի մասնակցությամբ:

Բնականաբար, վերլուծության ժամանակ հիշյալ ցուցանիշների խմբերի օրգանական կապի ապահովման խնդիր է առաջանում, քանի որ դժվարություներ են առաջանում բացարձակ և հարաբերական ցուցանիշների համադրումների գործընթացում:

Գործոնային վերլուծությունը նպատակ է հետապնդում գնահատելու դրամական զուտ հոսքերի վրա տարբեր գործոնների ազդեցության չափը և առավելապես կիրառելի է վերլուծության բացարձակ ցուցանիշների օգտագործմամբ: Այսպես, վերլուծության ժամանակ գնահատվում են կազմակերպության դրամական մնացորդների վերջնական մնացորդի ձևավորման գործառնական, ներդրումային և ֆինանսական գործունեության հետևանքով ձևավորված հոսքերից յուրաքանչյուրի ազդեցության չափը:



Գծապատկեր 1. Դրամական հոսքերի վերլուծության ցուցանիշները կորպորատիվ գործարարության միջավայրում⁵

⁵ Гильмиярова М.Р., Разработка методики управления денежными потоками в корпоративной структуре, Вестник Пермского университета, Вып. 3, 2015, С.121

Այս դեպքում, որպես կանոն, վերլուծության ժամանակ հիմնականում կիրառվում է հաշվեկշռման եղանակը՝ դրամական հոսքերը փոխկապակցելով կազմակերպության դրամական միջոցների սկզբնական և վերջնական մնացորդների հետ, կիրառելով շեղումների հետևյալ հաշվեկշռային կապը.


Դրամի վերջնական մնացորդ = դրամի սկզբնական մնացորդ (+,-) Δ գործառնական գործունեությունից զուտ հոսքեր (+,-) Δ ներդրումային գործունեությունից զուտ հոսքեր (+,-) Δ ֆինանսական գործունեությունից զուտ հոսքեր

Աղյուսակ 1. Դրամական հոսքերի վերլուծության գործակցային ցուցանիշները⁶

N	Անվանումը	Չափարկը	Մեկնաբանումը
1	Դրամական հոսքերի բավարարության գործակից	ԳԴԳ/երակարածամկետ պարտավորություններ + ձեռք բերված ակտիվներ + վճարված շահաբաժին	Դրամի բավարարությունը հիմնական պարտավորությունները մարելիս
2	Երկարաժամկետ պարտավորությունների փոխհատուցման գործակից	Երկարաժամկետ պարտավորություններ/գործառնական դրամական հոսքեր	Դրամի բավարարությունը երկարաժամկետ պարտավորությունները մարելիս
3	Շահաբաժինների փոխհատուցման գործակից	Շահաբաժիններ/գործառնական դրամական հոսքեր	Շահաբաժինների փոխհատուցման կարողություն
4	Ներդրումների վերաֆինանսավորման գործակից	Չեղք բերված ակտիվներ/գործառնական դրամական հոսքեր	Ներդրումներին գործառնական հոսքերի վերառողման կարողությունը
5	Ընդհանուր պարտավորությունների փոխհատուցման գործակից	Ընդհանուր պարտավորություններ/ գործառնական դրամական հոսքեր	Գործառնական հոսքերով պարտավորությունների փոխհատուցման կարողությունը
6	Ամորտիզացիոն հատկացումներով ճշգրտման գործակից	Ամորտիզացիոն հատկացումներ/ գործառնական դրամական հոսքեր	Ներկայացնում է զուտ շահույթի ճշտումը ամորտիզացիոն հատկացումներով
7	Իրացման նկատմամբ հոսքերի գործակից	Գործառնական դրամական հոսքեր/իրացման ծավալ	Բնութագրում է վաճառքի արժեքային միավորից դրամի ձևավորման տոկոսը
8	Գործառնական ինդեքս	Գործառնական դրամական հոսքեր/ընթացիկ գործունեությունից իրացում	Դրամական հոսքերի և գործառնական ծավալների ներդաշնակեցումը
9	Ակտիվներից օգտագործումից դրամի հատույց	Գործառնական դրամական հոսքեր/ ընդհանուր ակտիվներ	Բնութագրում է ակտիվների դրամաստեղծ ունակությունը

Մասնագիտական գրականությունում կարևորվում է նաև դրամական հոսքերի և տնտեսավարման արդյունքների փոխկապակցումն արտահայտող վերլուծական ցուցանիշների օգտագործումը (տե՛ս Գծապատկեր 2.): Այստեղ առավել շեշտադրում է կատարվում կազմակերպությունների տնտեսական գործունեության վրա դրամական հոսքերի որակական մասնակցության գնահատմանը՝ կիրառելով այնպիսի ցուցանիշներ, որոնք արժևորում են հոսքերի դրամաստեղծ բնույթը, շրջանառվող դրամի կապիտալահատույցը կամ դրամական միջոցների շարժի և գործառնական շահույթը:


⁶ L. Jooste, Cash Flow Ratios as a Yardstick for Evaluating Financial Performance in African Business, // University of Wollongong papers, 2006, page 7



Գծապատկեր 2. Դրամական հոսքերի և տնտեսավարման արդյունքների փոխկապակցումն արտահայտող վերլուծական ցուցանիշներ

Կազմակերպությունների տնտեսական գործունեության վրա դրամական հոսքերի որակական մասնակցության գնահատման ցուցանիշների հնարավորին չափ առավել ընդգրկումն ներկայացումը համակողմանի մեկնաբանությունների առիթ է ստեղծում դրամական միջոցների կառավարման համակարգում և նպաստում է ֆինանսական հոսքերի գծով արդյունավետ կառավարչական որոշումների կայացմանը, որին մեծ կարևորություն է տրվում դրամական հոսքերի կառավարմանն առնչվող մասնագիտական գրականությունում:⁷

⁷ Методол. аспекты формирования учетно-аналит. обеспечения управления финанс. потоками коммерч. организаций: / под ред. Н.Н. Хахоновой. Р н/Д., РГЭУ "РИНХ", 2009,



Գծապատկեր 3. Դրամական հոսքերի վերլուծության ցուցանիշների դասակարգման առաջարկվող մոտեցումները⁸

Դրամական հոսքերի վերլուծության ցուցանիշների՝ մեր կողմից առաջարկվող դասակարգումը (տե՛ս Գծապատկեր 3) հնարավորություն է տալիս համակարգելու վերլուծական ընթացակարգը՝ ըստ հոսքերի դինամիկայի, կառավարման ուղղությունների, կառավարչական որոշումների տեսակների, ինչպես նաև անալիտիկ գնահատումների մեթոդաբանական մոտեցումների:

Առաջարկվող դասակարգման պայմաններում հնարավորություն է ընձեռնվում առևտրային բանկերում ուղղակի կամ անուղղակի մեթոդաբանությամբ դրամական հոսքեր ներկայացնելիս կողմնորոշվելու կոնկրետ ցուցանիշի կիրառման նպատակահարմարության ընտրության և անալիտիկ հետազոտությունների ներդաշնակեցման հարցում:

Եվ վերջապես, դրամական հոսքերի վերլուծության ցուցանիշների նման դասակարգումը փոխկապակցում է կազմակերպությունների դրամական միջոցների ուղղակի և անուղղակի շարժը տնտեսավարման արդյունքների հետ, որը կարևորվում է ֆինանսական կայունության, գործառնական արդյունավետության բարձրացման գծով կայացվող կառավարչական որոշումներում:

С. 114, Уколова, С.А. Анализ и разработка методов оценки риска ден. потоков, Соверш. Бух. учета, анализа и аудита в соответствие с межд. стандартами фин. отчетности: м-лы Межд. научно-практ. конференции в рамках Межд. конгресса «Евразийство как основа устойчивого развития мирового сообщества в условиях глобализации» (18 октября 2012г. УрГЭУ, Варшавский университет естественных наук. Екатеринбург, 2012. с. 57-61.

⁸ Գծապատկերը կազմվել է հեղինակի կողմից:

Նարինե ՍԱՐԳՍՅԱՆ

Դրամական հոսքերի վերլուծության ցուցանիշների դասակարգման բարելավման ուղիները

Բանալի բառեր. ֆինանսական գործակիցներ, դրամական հոսքերի ցուցանիշներ, դրամական հոսքերի ներդաշնակեցում, դրամական հոսքերի արդյունավետ կառավարում

Դրամական հոսքերի դասակարգումը կարևորվում է կազմակերպությունների ֆինանսատնտեսական վիճակի ախտորոշման, ինչպես նաև ֆինանսական կայուն զարգացման, ընթացիկ և հեռանկարային վերլուծության համար: Այս առումով, էական նշանակություն է ձեռք բերում դրամական հոսքերի ձևավորման ընթացքը, ներդաշնակությունն ու արդյունավետությունը բնութագրող ֆինանսատնտեսական ցուցանիշների համակարգումը և դասակարգումը, որոնք դրվում են վերլուծական հաշվարկների հիմքում: Հողվածում առաջարկներ են կատարվում բանկային համակարգում դրամական հոսքերի վերլուծության ցուցանիշների դասակարգման ուղղությամբ:

Нарине САРГСЯН

Пути улучшения квалификации показателей анализа денежных потоков

Ключевые слова: финансовые коэффициенты, показатели денежных потоков, армонизация денежных потоков, эффективное управления денежных потоков

Квалификация денежных потоков становится важным при диагностики финансово-экономического состояния организации, а также при тактического и стратегического анализа финансового развития. В этой связи приобретает важное значение систематизация и квалификация финансовых показателей, отражающие гармонизацию, эффективность и состояние денежных потоков, используемые в процессе экономического анализа. В статье проводится рекомендации по совершенствованию квалификации показателей анализа денежных потоков в банковской сфере.

Narine SARGSYAN

Ways to improve qualification of indicators analysis of cash flows

Key words: financial ratios, indicators of cash flows, harmonization of cash flows, efficient management of cash flows

The qualification of cash flows becomes important in diagnosing the financial and economic position of the organizations, as well as in the tactical and strategic analysis of financial development. In this regard, the systematization and qualification of financial indicators, regarding harmonization, efficiency and positions of cash flows used in the process of economic analysis becomes important. The article makes recommendations on improving the qualification of indicators of cash flow analysis in the banking sector.